ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՆՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

2023թ-ի համար ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ին հատկացված պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման վերաբերյալ

Ք.Երևան **29 դեկտեմբերի 2023թ**

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն (այսուհետև Պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի, որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա մի կողմից և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Ուսումնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև Կազմակերպություն), ի դեմս Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Վարդանյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին Կողմեր), հիմք ընդունելով Կողմերի միջև 2023թ-ի հունվարի 11-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 12 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1. և 2.4.3. կետերի պահանջները, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը 2023թ-ի ընթացքում իրականացրել է ակտի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ով, 2-ով և 3-ով ներկայացված՝ 4523 ակ/ժամ ընդհանուր տևողությամբ թվով 211 ուսումնական միջոցառում, որոնց մասնակիցների թիվը կազմել է 4335՝

Անվանում	*2023թ*				
	ՀՀ ՊԵԿ նախագահի 2022թ. դեկտեմբերի 23-ի № 1360-Ա և ՀՀ ՊԵԿ նախագահի 2023թ. նոյեմբերի 1-ի № 1142-Ա հրամաններով նախատեսված		*2023թ հունվար-դեկտեմբեր ամիսներին փաստացի կատարված միջոցառումներ*		
	Ակ/ժամ	*մասնակից*	*քանակ*	*Ակ/ժամ*	*մասնակից*
Վերապատրաստման դասընթացներ հարկային և մաքսային ծառայողների համար	*260*	*140*	*8*	*301*	*144*
Ուսումնական դասընթացներ հարկային և մաքսային ծառայողների համար	*1050*	*1750*	*121*	*3192*	*2526*
Ուսումնական դասընթացներ հարկ վճարողների համար	*700*		*82*	*1030*	*1665*
Ընդամենը	***2010***	***1890***	*211*	*4523*	*4335*

Պայմանագրով ֆինանսական աջակցության գումարը կազմում է **181,909,000.00 (մեկ հարյուր ութսունմեկ միլիոն ինը հարյուր ինը հազար)** ՀՀ դրամ:

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե Ք.Երևան, Խորենացի 7 ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործադրական վարչություն հ/հ 900011054062 ՀՎՀՀ 02647057 Գլխավոր քարտուղար Է. Գևորգյան (ստորագրություն) Կ.Տ.	ՀՀ պետական եկամուտների կոմիտե «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ Ք.Երևան, Ահարոնյան 12/3 Երևանի թիվ 1 ՏԳԲ հ/հ 900018002585 ՀՎՀՀ 00107399 Տնօրենի ժ/պ Գ. Վարդանյան (ստորագրություն) Կ.Տ.